

ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՔ

Ո՛վ արատ պարզեւող ամէն բարիքներու, աղքատները փարթամացնող, էապէս եւ մի՛ շտ բարի, Հայրը մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի:

Քաղցրութեա՛մբ նայէ քու անպիտան ծառայիդ, եւ թոյլ մի՛ տար որ չար Գազանը ինծի դէմ պատերազմի: Ես դեռ մանուկ եմ, եւ արհամարհուած: Դուն, որ ամենակատար զօրութիւնը եւ անսկիզբ էութիւնն ես, իմ ամբոցս եւ պատըսպարա՛նս եղիր, երբ անիկա ինծի դէմ կը պատերազմի: Դուն, որ հայրն ես որբերուն, ինչպէ՛ ինծի, որ անկատար եմ տարիքով ու միտքով:

Կը վախնամ այն կամակոր եւ թունալից Օձէն, որ չըլլա՛յ թէ անոր խածնող ժանիքներուն տակ իյնամ իմ դիւրագայթ բնութեանս, մատղաշ տարիքիս եւ մտքիս խակութեան պատճառով: Փրկե՛ զիս, Տէր, քու անյաղթելի զօրութեանդ վախը ձգելով անոր վրայ, եւ կատարեա՛լ դարձուր զիս մարմնով, հոգիի քաջութիւն տուր, հաստատուն նկարագիր եւ քեզի ընդունելի կեանք մը, ինչպէս որ դուն՝ բարեսէրդ կը կամենաս:

Աշխարհիկ բաներէն վե՛ր բարձրացուր իմ միտքս, եւ իմ հոգիէս հեռացո՛ւր անոնց բաղձանքը: Թող մտքիս աչքերը խաւարի՛ն անոնց տեսքին քաշողութեան դիմաց, որպէսզի քու պարզեւղ եղող աչքերուս ամբողջ կորովովը միայն քե՛զ տեսնեմ, ո՛վ անիմանալի Լոյս, եւ քեզմո՛վ ցնծամ՝ տրտմութեան նշոյլ չունեցող եւ անանց ուրախութեամբ:

Երիտասարդութիւնս քեզմով եւ քու սիրո՛վդ թող լեցուի, իմ կատարելութիւնս քեզմո՛վ թող փառաւորուի, ծերութիւնս քեզմո՛վ թող հարստանայ, մահս քեզմով թող կենդանութեա՛ն վերածուի, եւ իմ ամբողջ կեանքիս մատակարարն ու վայելուչ կարգաւորողը դո՛ւն եղիր:

Տե՛ս, մարդասէր, իմ պաղատանքս, լսե՛ շրթներէս դուրս եկած աղօթքը, պարզեւե՛ ինդրանքս: Զիս դատարկ մի՛ արձակէր քու ներկայութենէդ, ո՛վ առատապարզեւ Թագաւոր: Այս աղօթքս կատարէ եւ զարդարե՛ իմ անզարդութիւնս, որպէսզի երբեք քեզմէ չհեռանամ, եւ պարենաւորուած ըլլամ ամէն բարի պարզեւներով: Եւ արժանի ըլլամ փառաւորելու քեզ՝ Միածին Որդիիդ եւ Սուրբ Հոգիիդ հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն: